ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 փետրվարի 2018թ. թիվ 40-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի
Ն 7-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի 02.02.2018թ. թիվ 18-23 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2018թ. հունվարի 12-ի «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու մասին» թիվ 7-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները.

1. Հավելվածի «Վիրաբուժական նեղ մասնագիտական բուժօգնություն և սպասարկում» մասը լրացնել նոր՝ 10-րդ տողով.

10	Կրկնակի վիրակապություն	ավարտված դեպք	1 000

2. Հավելվածի «Ակնաբուժական նեղ մասնագիտական բուժ օգնություն և սպասարկում» մասը լրացնել նոր՝ 6-րդ տողով.

6	Աչքից օտար մարմնի հեռացում	ավարտված դեպք	6 000

3. Հավելվածի «Լոգոպեդի ծառայություններ» մասից հետո մատուցվող վճարովի ծառայությունների ցանկը լրացնել նոր՝ 7-րդ տողով.

7	Տեղեկանք՝ կատարված պատվաստումների վերաբերյալ	1 տեղեկանք	4 000

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2018թ. փետրվարի 12
ք.Վանաձոր